## 126. ԿԸՆԳՅԱ̈ ՇԱՌԸ

Ըլել ա լել չի, մի մարթ, մի կընիկ ա ըլել։ Սըհա̈նք միշտ հա-ցըի նըստըիլիս իրար հետ սըպոռ են անըմ։ Կընիկը ասըմ ա. «Ա՛ մարթ, տո̈ւ աստոծ կա̈նչի, ասա, աստո՞ծ, փինձ կընգյա̈ շառիցը հեռու պահիր»։ Մարթն էլ ասըմ ա. «Քյընա̈՛ է՞, տո̈ւ էլ, քու շառն ի։ Տո̈ւ ի՞նչ ես, թե քու շառը ի՞նչ դի ըլիլ»։

Մի օր էլ էս կընըիկը ասըմ ա. «Դե լա̈վ, կացըի, թե ես քու հախիցը կյա̈մ վըրեչ՝ ես մարթ չեմ։ Ես քու կըլխին մի քյա̈լա̈կ պի-րեմ՝ էն վախտը նոր տո̈ւ կդյըրդենաս, թե ինչ ա կընգյա̈ շառը»։

Մի ըռավըետ տըենըմ ա մարթը եղնիքը լըծեց, չո̈ւթը լըծնո̈վը բըցեց ու քյընա̈ց։ Ասըմ ա. «Էտ ո՞ւր էս քյընըմ, ա՛ մարթ»։ Նա̈ էլ ասըմ ա. «Քյընըմ եմ չո̈ւթ վարիլ»։ Ասըմ ա. «Ծա̈շվա հացը հետըդ տանը՞մ ես, թե՞ սպիրեմ տափը»։ Մարթն էլ ասըմ ա. «Մի քիչ խորակից, պա̈նից կըէփես կըպիրես»։

Ծա̈շվա դոյեն կընիկը մը լա̈վ եղալի քաշովըի ա էփըմ, լըց-նըմ մի պո̈ւճո̈ւր կաստուրկի մեջ, մի բոխչըմ հացի հետ կապըմ ու ճամփա ընգյընըմ։ Կըրմընջովը անց կենալըիս տըենըմ ա հըրես ծուկը փոնողնի կան։ Ասըմ ա. «Էս ա լա̈վ ուղատն ա ընդյել. ըսօր մարթըիս կըլխին մի օյին դեմ կյա̈լ»։ Քյընըմ ա տըհա̈նցից մի էը-կու կյիլո ճըրըրկոլոլ սաղ-սաղ ծո̈ւկն ա առնըմ ու տըհա̈նց վեդըրովը տանըմ։ Վեդըրի փողն էլ տալըիս ա, ասըմ ա. «Ախպեր ջա՛ն, հը-րիս մի սըհաթեն եղը, վեդըրետ պիրըմ եմ»։

Հասնըմ ա մարթըի կուշտը, տըենըմ ա մարթը հըրե արտըի

էն մի ծըերըմը, պա̈ղի քըմակին։ Կամաց ճա̈շը տընըմ ա ղըաղ ու էտ ծըկները վեդըիցը հանըմ ա, մին-մին ծըըըմը տընիլով քյընըմ ա մըշևը թա̈մուզ պըըծընըմ ա։ Էտ վեդըեն տանըմ ղըաղ պահըմ ու էն ղոլովը պըտըտվմ կյալի մարթի կուշտը, մըթա̈մ թե պանից տեղեկութին չունի։ Մարթը ասըմ ա. «Ա՛ կնիկ, հացը տի փմ շորերի կշտին, էս մի ծըիրն էլ վարըմ եմ, նոր կըկյամ հաց կուտըեմ»։

Էտ մի ծըիրն էլ, վըեր վարըմ ա, մըխելախ քյընըմ ա, տըեն ըմ ա՝ հըրես մի ծուկը։ Սա̈ եզնիքը կըղնըցնըմ ա, ծո̈ւկը վըեր ունըմ մըտըիկ անըմ, մըտիկ, ինքը իրան աչքերին հըվատըմ չի։ Գյիդըմ ա, թե էրաղըմ ա։ Մըտիկ անըմ ա չորս ղոլը, չոր ու ցամաք տաշտ ա, օրն էլ ճա̈շ, եզնիքը լըծա̈ծ չութ ա վարըմ։ Ասըմ ա. «Չէ՛, սա̈ էրաղըմ չեմ, համա դե, աստոծ շան, էս ինչ պա̈ն ա, էս յաշեն մարթ եմ, տըեհել չեմ, վըեր տափըի տակին ծուկը ըլի, սա̈ լա̈վ նշան չի։ Ով ա դյիդըմ ըս տարի լա̈վ տարի կըլի թե չէ. գյա̈ կըռիվ գի ըլխ, գյա̈ մի փիս պա̈ն»։

Ծուկը վըեր ա ունըմ քըցըմ փարթուկը, մի քիչ քյըմըմ ա, տըենըմ ա հըրես մինն էլ՝ էտ էլ ա վըեր ունըմ, մի քիչ էլ քյընըմ ա՝ մինն էլ ու ըըհե մըշևը հասնըմ ա կընգյա̈ կուշտը էրկու կյիլո ծո̈ւկը թուփ ա ըլըմ, փեշը լցնըմ ա, տանըմ ա կնգյա̈նը, ասըմ ա. «Ա՛ կնիկ, բա ասըիլ չես, թե տափը վարիլիս ծուեն եմ քթել»։ Կընիկը ըրմացած վըրա̈ ա վազըմ, ծո̈ւկը մարթըի ծըեռիցը առնըմ ա աչ ու ծախ մըտիկ անըմ, ըրմանըմ, իրեսին խաչ քաշըմ, ֆըետ անըմ ու մարթըին ասըմ. «Ա՛ մարթ, տըենաս էս ի՞նչ պա̈ն ա, մգյա̈ր ֆըեղմն էլ ա ծո̈ւկը ըլըմ։ Տըենաս էլ կըլի. թե մըենակ էսքան ա ըլել»։ Ասըմ ա. «Ես ինչ եմ գյիդըմ, մըթա̈մ էսքանիցը շատ եմ ռա̈զի։ Սա̈ լա̈վ նըշան չի։ Հըլա̈ տար էսքանը ըրո̈ւգյո̈ւնը էփի, կյա̈նք ուտենք, մեկելը տըենանք աստոծ ինչ կըպիըի կըլխներիս»։

Կրնիկը ծըկները վըեր ա ունըմ, կյա̈լի ճըմփին ածըմ ա վեդըի մեչը, տանըմ լըվա̈նըմ ու ըլետ տըհե ճըըըկոլոլ տալի տո̈ւըո̈ւնչը։ Ասըմ ա. «Ախպեր շան, մարթս հավան չի կըցավ, խընթըըմ եմ էս ծո̈ւկը վըե կալեք»։

Սըհա̈նք մըխելի թա̈հթո̈ւհմա̈թ են անըմ, համա դե ըլետ վըեր են ունըմ։ Էս կընիկը կյա̈լիս ա տուն, փըլավը էփըմ ա, ու մարթըի ճամփըեն պահըմ։ Ըրո̈ւգյո̈ւնը մարթը կյա̈լիս ա տուն, եզնիքը թող անըմ, խոտ ա տալըի, կընիկն էլ ստոլը սարքըմ ա՝ հաց, պանիր, փլավ ա պիըըմ տնըմ։ Մարթը նըստըմ ա ստոլըի քըշ-

տին, տենըմ ա ստոլի վըրա ամեն պան էլ կա, մենակ ծուկը չկա։ Ասըմ ա. «Ա՛յ կընիկ, բա ծըկները ո՞ւր են»։ Կընիկը ասըմ ա. «Ի՞նչ ծուկը»։ Ասըմ ա. «Էն վըեր արտը վարիլիս քըթա բըն տըվըի»։ Ասըմ ա. «Ա՛յ մարթ, տու հըլեյի էրազով ընցած ըլես, ի՞նչ ծուկը»։ Սա նորից ասըմ ա. «Էն վըեր արտիցը քըթա բըղ արվըի»։ Ասըմ ա. «Ա՛յ մարթ, տու շա՞շ ես, գյի՞ժ ես, բա արտըմը ծուկը կըլի, ո՞վ ա գյիդըմ ընդեղ քընել էս, էրազ ես տըեհել»։

Էս կընիկը սըհե ա ասըմ, մարթը եքսան կըտաղըմ ա, քիչ ա մընըմ, թե իրան ուտըի, մի զաժի ճիպոտ ա վըեր ունըմ ու տըրա նդնա ըլըմ։ Մին, էրկու՝ վըեր տրա կարկաժնըվըերա թակըմ ա, ատ տուս ա վազըմ կալը ընքելանը բըղավըմ ա։ «Հա՛յ, հա՛րայ, հասե՛ք սըպանեցին»։ Էդ բըղավոցի վըրա հըրեվաննին չորս դոլիցը վըրա են հասնըմ. «Ի՞նչ ա պըտահել, ախչի ի՞նչ ա ըլել»։ Սա ասըմ ա. «Մարթս շաշվել ա, խելքը եա ա տըվըել, կըտաղել ա քիչ ա մընըմ, թե ինձ սպանըի։ Ասըմ ա, թե ըսօրի տափը վարիլիս ծուկն եմ քըթել՝ քեզ տըվըել, խի՞ չես էփել»։ Մըհել էն դոլիցը մարթը ճիպոտը ծըեռին թափ տալով կյալիս ա, ասըմ ա. «Ա՛յ ժողովուրթ, աստոծ, երգյինք վըկա ըսօր արտը վարիլիս ծուկն եմ քըթել, տըվել եմ իրան, ասել եմ՝ տար էփի, վըեր ըրուգյանը կյանք, ուտենք։ Հըմի եկել եմ, տա ծուկը պիտըմ չի, ասըմ ա՝ տու ինձ ծուկը չես տըվել։ Ատկաղ ա կյալի, գյիդըմ չեմ, թե ի՞նչ ա արել, ո՞ւմ ա տըվել»։

Էս մարթը վըեր սըհե ա ասըմ, էտ ժողովուրթը սկսըմ ա տըրա վըրա ծիծաղիլը։ Ասըմ են՝ էս մարթը շաշվել ա։ Մինը ասըմ ա՝ սըրփուցից ա, մինն էլ ասըմ ա՝ մըտածիլուց ա ու չորս դոլիցը ամեն մարթ իրան խելքի փըչածը ասըմ ա։ Մըհել մարթը նորից կընդյանը ասըմ ա. «Ա՛յ կընիկ, ծուկը ի՞նչ ես արել, թե կերել ես՝ ասա. թե պատվըենին ես տարել՝ էլ ասա, մենակ ինձ հետաքըրքըրըմ ա էտ ֆըեղի ծըկան համը ի՞նչ ղայդի էր»։ Կընիկը թե. «Ես վըեչ մի պանից խաբար չեմ, էտ չիմ տու էրազըմ ես տըեհել»։ Սըրա էս խոսքերի վըրա մարթը եքսան ա կըտաղըմ ու սկսըմ ա տըրան վըետնատակ տալը ու ճիպոտըխառով անըիլը։

Կընիկը ասըմ ա. «Ա՛յ ժողովուրթ, ա՛ ծըեզ մատաղ, սըրան կապըեցեք, թե չէ ինձ քըշերս կսպանի։ Տըենըմ եք վըեր սա արթեն շաշվել ա, տունս քանդվեց. մի տուն լիքը ըրեխեքը ես վըե՞նց դիմ պահի, ի՞նչ դեմ շինիլ»։ Ասըմ ա ու սկսըմ ա իրան կլխին վընեթակիլը մազերը պըռճոկիլը։ Կընանիքը կյալիս են տըրա կը-

ները ընգյընըմ, տանըմ, հույս են տալի, թե զատ չիկա. գյըրա̈գյի օրը մի մատաղ կտանեք խաշը, կմորթեք, փայ-փայ կանեք՝ ծըե-ռած կըլա̈վա̈նա։

Տըզըմարթիք էլ էտ խեղճ մարթըին վըռնըմ են, զոռով կըռ-ները քյա̈նդիրով կապըմ են ու տանըմ են քըցըմ մի պադվալ։ Մի իրեք օր անց ա կենըմ, կընիկը ասըմ ա. «Հըլա̈ քյընա̈մ տըենամ մարթս ի՞նչ պա̈նի ա»։ Քյընըմ ա, տըենըմ ա մարթը հըըե ակոշ-կիցը սոված-ծարավ ծըկրակին ա տալի։ Ասըմ ա. «Հը՞, մարթ վըե՞նց ես, կընգյա̈ շառը զոռըա յա, թե չէ»։ Ասըմ ա. «Ա՛ կնիկ, աման գյունըմ տու քու աստոծը, փնձ ըստեղա̈ն ազատի»։ Գյըրա̈գյի օրը մի վըեռցակ ա մորթըմ, օխտը տուն փայ ա անըմ ու ասըմ ա՝ մատաղ ա։ Էքսը քյընըմ ա, ասըմ ա. «Մարթս խելոքացել ա, էկեք թող արեք՝ կյա̈ տուն։ Սուրփ Կարապետից էր. նրա զ̈րու-ձինին մատաղ, մի վըեռցակ մատաղ արի՝ անցկըցավ»։